ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

TUR-PPI-03

«ՋԻԲԻԷՅՋ» ՍՊԸ-Ի ՀՅՈՒՐԱՆՈՑԱ-ՌԵՍՏՈՐԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԸ ՍՊԱՍԱՐԿՈՂ ԱՐՏԱՔԻՆ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

ՀՈՒՆՎԱՐ 2024

ՄԱՍ Ա: ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԱԽԱԳԻԾՆ ՈՒ ՏԵՂԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Կառուցվածքային եվ վարչական	
Նախագծի անվանումը	**ՏԵՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵԲ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ /ՏՏԵԶ/**
Ենթածրագրի համարն ու վերնագիրը	«ՋիԲիԷյջ» ՍՊԸ-ի հյուրանոցա-ռեստորանային համալիրը սպասարկող արտաքին ինժեներական ենթակառուցվածքների կառուցում, TUR-PPI-03
Համայնք	Կոտայքի մարզ, Գառնի համայնք
Տեղանքում նախատեսվող գործողությունների շրջանակը	Նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները. Մոտեցնող ճանապարհ No.1-ի վերակառուցում Հ3, Երևան - Գառնի ավտոմայրուղուց դեպի հյուրանոցա-ռեստորանային համալիրի գլխավոր մուտքին մոտեցնող ճանապարհը, որի ընդհանուր երկարությունը կազմում է մոտ 846 մ անցնում է Կոմիտաս (≈331 մ), Բաղրամյան (≈324 մ) և Գ. Զոհրապ (≈191 մ) փողոցների հատվածներով: Մոտեցնող ճանապարհ No.1-ի երթևեկելի մասի ընդհանուր մակերեսը կազմում է 5,743 քմ, որից ասֆալտե ծածկույթով ճանապարհի մակերեսը կազմում է 5,127 քմ (երկարությունը՝ 706 մ), իսկ բազալտե չորսվակասալերով սալարկված ճանապարհի մակերեսը՝ 616 քմ (երկարությունը՝ 140 մ): Մոտեցնող ճանապարհ No.1-ի վերակառուցումը ներառում է վերոնշյալ փողոցների մայթերի ասֆալտե ծածկույթի վերականգնումը, բազալտե եզրաքարի փոխարինումը և փողոցների եզրով տեղադրված ոռոգման ջրի և դրենաժային առուների երկաթբետոնե վաքերի փոխարինումը: **<u>Մոտեցնող ճանապարհ No.2 վերակառուցում</u>** Մոտեցնող ճանապարհ No.2-ի երթևեկելի մասի ընդհանուր երկարությունը կազմում է մոտ 220 մ, իսկ մակերեսը մոտ՝ 1,162 քմ: Մոտեցնող ճանապարհ No.2-ի վերակառուցումը ներառում է վերոնշյալ փողոցի մայթերի ասֆալտե ծածկույթի վերականգնումը, բազալտե եզրաքարի փոխարինումը և փողոցների եզրով տեղադրված ոռոգման ջրի և դրենաժային առուների երկաթբետոնե վաքերի փոխարինումը: **<u>Կեղտաջրերի հեռացման համակարգ</u>**

	Հյուրանոցա-ռեստորանային համալիրի կեղտաջրերի հեռացումը կազմակերպելու համար նախատեսվում է կառուցել 481 մ երկարությամբ 250 մմ նոմինալ տրամագծով կոյուղու պոլիէթիլենային ծալքավոր խողովակներից ստորգետնյա կոյուղագիծ, որը միացվելու է Բաղրամյան և Կոմիտաս փողոցների խաչմերուկին մոտ գտնվող 500 մմ նոմինալ տրամագծով ասբոցեմենտե կոյուղատարին: Կառուցվող կոյուղագծի երկայնքով՝ նախագծով նախատեսված տեղերում տեղադրվելու են 22 հատ 1000 մմ տրամագծով ե/բ դիտահոր: Կոյուղագծի վերջնակետում տեղադրվող դիտահորը կառուցվելու է հյուրանոցա-ռեստորանային համալիրի գլխավոր մուտքի մոտ՝ համայնքապատկան տարածքում: Հարկ է նշել, որ նոր կառուցվող կոյուղագծի Բաղրամյան փողոցով անցնող հատվածի դիտահորերին կմիացվեն նաև 44 հատ գոյություն ունեցող տնային միացումների 150 մմ նոմինալ տրամագծով խողովակներ: <u>Էլեկտրամատակարարման համակարգ</u> Հյուրանոցա-ռեստորանային համալիրի Ջի-Բի-Էյջ» ՍՊԸ-ի կողմից կառուցվող հյուրանոցա-ռեստորանային համալիրի 0.4 կՎ, 280 կՎտ հզորությամբ էլեկտրամատակարարումը ապահովելու համար նախատեսվում է տեղադրել 120 գծմ երկարությամբ ստորգետնյա մալուխագիծ: Մասնավորապես՝ հաստատված աշխատանքային նախագծով նախատեսված է տեղադրել 4x240 մմ^2 հատույթով, АВВГ-1000 տեսականիշի մեկուսացված ալյումինե մալուխագիծ (240 գծմ = 2x120 գծմ), ներառյալ DN100 մմ PVC ճկվող էլեկտրական պաշտպանիչ խողովակը: Նշում՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ /«Գեղամա» մասնաճյուղ/ «Աբովյան» շրջանային էլեկտրական ցանցերի կողմից 2023 թվականի ապրիլի 29-ին ներկայացված N 700 գրության համաձայն Գառնի գյուղում Գ. Զոհրապ փողոց թիվ 25 հասցեում (կադաստրային ծածկագիր 07-021-0078-0036) «Ջի-Բի-Էյջ» ՍՊԸ-ի կողմից կառուցվող հյուրանոցա-ռեստորանային համալիրի 0.4 կՎ, 280 կՎտ հզորությամբ էլեկտրամատակարարումը կիրականացվի հետևյալ կերպ՝ 1. Անհրաժեշտ է համայնքային պատկանելիության հողամասից էլեկտրական ենթակայանի տեղադրման համար «ՀԷՑ» ՓԲԸ-ին հատկացնել մոտ 20 քմ մակերեսով հողատարածք: 2. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից տրամադրված տեխնիկական պայմաններով LTE-ի 10կՎ լարման սարքավորումներից կտեղակայվի մոտ 100 մ 10կՎ ստորգետնյա մալուխային գիծ (ըստ 2023թ. ապրիլի 29-ի Գառնի

	համայնքի ղեկավարի տրված N700 տեղեկանքի)։ 3. Կտեղադրվի 400 կՎԱ հզորությամբ ԼՏԵ, որից և կիրականացվի 0.4կՎ էլեկտրամատակարարում։ Էլեկտրական ենթակայանի տեղադիրքը և ստորգետնյա մալուխագծի ուղեգիծը պատկերված է տվյալ ենթածրագրի հաստատված աշխատանքային նախագծի «Ինժեներական կոմունիկացիաներ» մասի /Հատոր 2/ «Էլ հատակագիծ» գծագրում։		
Կառուցվածքային համաձայնագրեր (ՀԲ)	Ծրագրի ղեկավար՝ Թաֆադզվա Իրվին Դյուբ	Երաշխիքների մասնագետ՝ Լուսինե Գևորգյան (բնապահպանական) Սոնյա Մսրյան (սոցիալական)	
Իրականացման համաձայնագրեր (ՀՀ)	Իրականացնող կազմակերպություն՝ ՀՏԶՀ Արմինե Գաբրիելյան (բնապահպանական) Մարինե Վարդանյան (սոցիալական)	Տեխնիկական վերահսկողություն իրականացնող կազմակերպություն՝ Հալդի Քոնսալթ ՍՊԸ	Շինարարություն իրականացնող կազմակերպություն՝ Էլշին ՍՊԸ
Տեղանքի նկարագրություն			
Այն կառույցի անվանումը, որի օբյեկտները ենթակա են վերանորոգման	ՀՀ Կոտայքի մարզ, Գառնի համայնք		
Այն կառույցի հասցեն ու գտնվելու վայրը, որի օբյեկտները ենթակա են	ՀՀ Կոտայքի մարզ, Գառնի համայնք		

վերանորոգման	
Հայտատու կազմակերպությունն	«Ջի Բի Էյջ» ՍՊԸ
Ո՞վ է հողի սեփականատերը Ո՞վ է հողօգտագործողը (պաշտոնապես/ ոչ պաշտոնապես)	Ծրագրով շրջանակներում նախատեսված վերակառուցվելիք ճանապարհը, մայթերը և դիտահորերը գտնվում են համայնքային հողերում (համայնքապետարանի նամակը կցվում է Հավելված 5-ում) և ենթածրագրի իրականացման համար մասնավոր հողատարածք չի օգտագործվելու: Ենթածրագրով նախատեսվող կառուցվելիք կոյուղու ցանցը գտնվում է հանրային հողատարածքի վրա: Էլեկտրամատակարարման համակարգը կառուցվելու է համայնքային սեփականության հողատարածքներում: Ենթածրագրով չի նախատեսվում մասնավոր հողերի, մշակաբույսերի, պտղատու ծառերի և/կամ կենցաղային ենթակառուցվածքների ժամանակավոր կամ մշտական կորուստ: Տարածքում գործող կրպակներ կամ ձեռնարկություններ չկան: Բնակելի տները գտնվում են վերանորոգման ենթակա փողոցների երկայնքով: Ճանապարհի երկայնքով գտնվող տների բնակիչները նախապես կտեղեկացվեն նախատեսվող շինարարական աշխատանքների մասին:
Սույն ենթածրագրի տեղանքի ֆիզիկական և բնական միջավայրի նկարագրությունը	Ենթածրագրի շրջանակներում նախատեսվող վերակառուցման ենթակա տարածքը գտնվում է Կոտայքի մարզի Գառնի համայնքում: Ճանապարհը սկսվում է Զոհրապ փողոցում գտնվող «Ջի Բի Էյջ» հյուրանոցից, աջ կողմից շարունակվում է դեպի Բաղրամյան փողոց, իսկ ձախից՝ Կոմիտաս փողոց: Զոհրապի փողոցը գրունտային է, մյուս փողոցները՝ ասֆալտապատ են, սակայն գտնվում են վատ վիճակում: Հյուրանոցի մոտ կան մի քանի ծառեր: Վերակառուցվող տարածքից 400 մ հեռավորության վրա Ազատ գետի ձախ ափին գտնվում է հին հեթանոսական Գառնու տաճարը, որն ունի պատմամշակութային: «Խոսրովի անտառ» պետական արգելոցը գտնվում է վերականգնման ենթակա տարածքից մոտավորապես 370 մ հեռավորության վրա: Մինչև «Քարե սիմֆոնիա» բնության հուշարձանի ամենակարճ հեռավորությունը մոտ 550 մ է (տես քարտեզ 2): Տարածքի վերակառուցումը կարևոր է զբոսաշրջության

	զարգացման տեսանկյունից, այն կնպաստի զբոսաշրջիկների հոսքին: Ծրագրի իրականացումը կգրավի մասնավոր սեփականատերերին, ինչպիսին է «ՋիԲիԷյջ» հյուրանոցը, կատարելու ներդրումներ: Շինարարությունը ընթացքում ճանապարհների լայնացման աշխատանքներ չեն նախատեսվում: Նախատեսվող վերակառուցման աշխատանքները հարակից տներում ապրող մարդկանց համար ևս օգտակար կլինեն: Տարածաշրջանին բնութագրական է տաք և խոնավ ամառը և չափավոր ցուրտ ձմեռը: Հուլիսի միջին ջերմաստիճանը 16°C-ից 20°C է, իսկ հունվարի միջին ջերմաստիճանը 0°C-ից -5°C:
ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ	
Ազգային, տեղական օրենսդրություն և թույլտվություններ, որոնք պահանջվում են ծրագրում	ՀՀ հետևյալ օրենքները սահմանում են իրավական շրջանակը, որը կիրառելի է ծրագրի գործունեության համար. - Մթնոլորտային օդի պաշտպանության մասին ՀՀ օրենքի (1994) «Մթնոլորտային օդի պաշտպանության մասին» ՀՀ օրենքի նպատակը ՀՀ կառավարության հիմնական սկզբունքների սահմանումն է՝ ուղղված մթնոլորտային օդի մաքրության ապահովմանը և օդի որակի բարելավմանը, օդի որակի վրա քիմիական, ֆիզիկական, կենսաբանական և այլ ազդեցությունների կանխարգելմանը և մեղմմանը: Սույն օրենքը նաև կարգավորում է արտանետումների թույլտվությունները և ապահովում է մթնոլորտային օդի աղտոտման առավելագույն թույլատրելի բեռներ / քանակություններ և այլն: Համաձայն այս օրենքի, կապալառուն պարտավոր է իրականացնել շինարարական աշխատանքներ, ինչպես նաև աղբի տեղափոխում և ժամանակավոր պահպանում փոշին և այլ արտանետումները նվազագույնի հասցնելու նպատակով: -Թափոնների մասին ՀՀ օրենք (2004) Օրենքը իրավական և տնտեսական հիմք է տալիս թափոնների հավաքման, տեղափոխման, հեռացման, մաքրման, վերաօգտագործման, ինչպես նաև թափոնների բացասական ազդեցության կանխարգելման համար՝ բնական պաշարների, մարդու կյանքի և առողջության վրա: Օրենքը սահմանում է պետական լիազոր մարմինների, ինչպես նաև թափոնների արտադրող կազմակերպությունների դերն ու պարտականությունները թափոնների կառավարման գործընթացներում:

	Համաձայն այս օրենքի, շինարարական գործունեությունից առաջացած թափոնները պետք է վերամշակվեն ըստ անհրաժեշտության կամ տեղահանվեն նշանակված վայրերում: Ընտրված վայրերում շինարարական թափոնների և ավելցուկային նյութերի հեռացումը պետք է գրավոր հաստատվի համայնքապետարանի կողմից: -Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՀ օրենք (2023) Օրենքը սահմանում է գործունեության տեսակը, որը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և շրջակա միջավայրի փորձաքննության: Ըստ սույն օրենքի, վերականգնման առաջարկվող աշխատանքները ենթակա չեն շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության, քանի որ ենթածրագրի շրջանակը չի ներառում գործունեություն, որը ներառված է սույն օրենքի Հոդված 12, Կետ 6-ում բերված ցանկի որևէ կետին: - ՀՀ քաղաքաշինության մասին օրենք (1998) Սույն օրենքը սահմանում է ՀՀ-ում քաղաքաշինական գործունեության սկզբունքներն ու կանոնակարգերը: Համաձայն այս օրենքի՝ պլանային աշխատանքների համար անհրաժեշտ է շինարարության թույլտվություն ստանալ: - ՀՀ աշխատանքային օրենսգիրք (2005) Սույն օրենսգիրքը կարգավորում է կոլեկտիվ և անհատական աշխատանքային հարաբերությունները, սահմանում է այդ հարաբերությունների ծագման, փոփոխման և դադարեցման հիմքերը և դրանց իրականացման կարգը, աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև անվտանգության և ապահովման պայմանները: աշխատողների առողջությունը. Համաձայն այս օրենքի, Կապալառուն պետք է ապահովի շինհրապարակում աշխատող աշխատողների անվտանգությունն ու առողջությունը: - ՀՀ հողային օրենսգիրք (2001) Սույն օրենսգիրքը սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների

	պաշտպանության իրավական հիմքերը՝ ելնելով հողի կարևոր բնապահպանական, տնտեսական ու սոցիալական նշանակությունից, որի շնորհիվ Հայաստանի Հանրապետությունում հողն օգտագործվում և պահպանվում է որպես ժողովրդի կենսագործունեության պայման: Հողի տիրապետումը, օգտագործումը և տնօրինումը չպետք է վնաս պատճառի շրջակա բնական միջավայրին, երկրի պաշտպանունակությանն ու անվտանգությանը, չպետք է խախտի քաղաքացիների և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը: Պատմության եվ մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եվ օգտագործման մասին ՀՀ օրենք (1998) Սույն օրենքի համաձայն՝ Հուշարձաններ ներառող տարածքներում շինարարական, գյուղատնտեսական և այլ կարգի աշխատանքների համար հողի հատկացումները, կառուցապատման, ինժեներատրանսպորտային հաղորդակցության ուղիների նախագծերը սահմանված կարգով համաձայնեցվում են լիազորված մարմնի հետ: Համաձայն ՀՀ ազգային օրենսդրության շրջանակի՝ ենթածրագրի համար պահանջվում է. - Շինարարության թույլտվություն**; - Շինարարական թափոնների հեռացման թույլտվություն.
ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ	
Ե՞րբ/ո՞ւ՞ր է հանրային քննարկումը տեղի ունեցել/ունենալու	ԲՍԿՊ-ի նախագիծը կհրապարակվի և կքննարկվի Գառնի համայքնում կայանալիք հանրային քննարկման ժամանակ: ԲՍԿՊ-ի նախագիծը կհրապարակվի հայերեն և անգլերեն լեզուներով ՀՏՋՀ-ի կայքում (atdf.am), իսկ հայերեն լեզվով՝ շահառուի կայքում (garni.am) և սոցիալական տեղեկատվական էջում: Նախատեսվող աշխատանքների մասին համառոտ տեղեկատվություն և կոնտակտային տվյալները՝ հարցերին ու դժգոհություններին անդրադառնալու համար, կտեղադրվեն Գառնիի համայքնապետարանի տեղեկատվական տախտակին, շինարարական հրապարակում և/կամ նրա անմիջական տարածքում:
ԿԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՆՅՈՒԹԵՐ	

Հավելված 1: Տեղանքի քարտեզ /լուսանկար
Հավելված 2: Շինարարական թափոնների հեռացման թույլտվության պատճեն
Հավելված 3: Բնապահպանական և սոցիալական կառավարման պլանի վերաբերյալ հանրային քննարկման արձանագրություն /կտրամադրվի/
Հավելված 4: Շինարարական թույլտվություն (կտրամադրվի**)
Հավելված 5: Գառնի համայնքապետարանի կողմից տեղեկանք՝ հողերի սեփականության վերաբերյալ

*Աշխատանքների վերահսկողի և իրականացնողի (կապալառուի) վերաբերյալ և հավելվածները կներկայացվեն ընտրված կապալառուի կողմից շինարարության մեկնարկի տրմանը զուգահեռ

**Շինարարության թույլտվությունը կձեռքբերվի աշխատանքների մեկնարկից առաջ:

ՄԱՍ Բ: ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ /ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴԻՏԱԶՆՆՈՒՄ			
	Գործողություն	**Կարգավիճակ**	**Խթանիչ գործողություններ**
Իրականացվող գործողությունները ներառելու են արդյոք նշվածներից որևէ մեկը	1. Ճանապարհի վերանորոգում	[x] այո [ ] ոչ	Տես ստորև բաժին Ա
	2. Կեղտաջրերի հեռացման առանձին համակարգ	[ ] այո [x] ոչ	Տես ստորև բաժին Բ
	3. Պատմական շենքեր և շրջաններ	[ ] այո [x] ոչ	Տես ստորև բաժին Գ
	4. Հողի օտարման անսպասելի կարիք	[ ] այո [x] ոչ	Տես ստորև բաժին Դ
	5. Վտանգավոր կամ թունավոր նյութեր[1]	[ ] այո [x] ոչ	Տես ստորև բաժին Ե
	6. Ազդեցությունը անտառների և/կամ պաշտպանված տարածքների վրա	[ ] այո [x] ոչ	Տես ստորև բաժին Զ
	7. Բժշկական թափոնների կարգավորում/կառավարում	[ ] այո [x]ոչ	Տես ստորև բաժին Է
	8. Երթևեկության և հետիոտնային անվտանգություն	[x] այո [ ] ոչ	Տես ստորև բաժին Ը
	9. Սոցիալական ռիսկերի կառավարում	[x] այո [ ] ոչ	Տես ստորև բաժին Թ

[1] Թունավոր / վտանգավոր նյութերը ներառում են սակայն չեն սահմանափակվում ասբեստ, թունավոր ներկեր, վնասակար լուծիչներ, կապարի ներկերի հեռացում և այլն:

ՄԱՍ Գ: ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Գործունեություն	Պարամետր	Մեղմացնող միջոցառումներ
0. Ընդհանուր պայմաններ	Ծանուցում եւ աշխատողների անվտանգություն	(ա) Կառուցապատման և բնապահպանական հարցերով զբաղվող տեղական տեսչությունները ծանուցվել են առաջիկա գործողությունների մասին: (բ) Հանրությունը աշխատանքների մասին իրազեկվել է՝ լրատվամիջոցներով և/կամ հանրությանը հասանելի կայքերի միջոցով համապատասխան ծանուցման միջոցով (այդ թվում աշխատանքների տեղամասում տեղադրվել են տեղեկատվական ցուցանակներ): (գ) Ձեռք են բերվել կառուցապատման և/կամ հիմնանորոգման համար պահանջվող բոլոր իրավական թույլտվությունները: (դ) Կապալառուն ֆորմալ կերպով համաձայնել է, որ բոլոր աշխատանքներն իրականացվելու են անվտանգ և օրինապահ եղանակով, որոնք նախագծվել են այնպես, որ հարևան բնակչության և շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հասցվեն նվազագույնի: (ե) Աշխատողների անհատական պաշտպանիչ սարքավորումներ/միջոցները համապատասխանում են միջազգային լավ գործելակերպին (միշտ կրում են պաշտպանիչ սաղավարտներ, ըստ անհրաժեշտության՝ դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, անվտանգության գոտիներ և կոշիկներ): (զ) Տեղամասում տեղադրված համապատասխան նշանները տեղեկացնում են աշխատողներին այն հիմնական կանոնների և կարգերի մասին, որոնց նրանք պետք է հետևեն:
Ա. Ընդհանուր վերականգնման կամ շինարարական տվյալներ	Օդի որակ	(ա) Հողային աշխատանքների ժամանակ փոշին ճնշվում է ջրի շարունակական ցողման և/կամ տեղում փոշու էկրանների տեղադրման միջոցով: բ) շրջակա միջավայրը (մայթեր, ճանապարհներ) զերծ է բեկորներից՝ նվազագույնի հասցնելու համար փոշին: (գ) Տեղանքում չի իրականացվում շինարարության/թափոնների բաց այրում: (դ) Շինարարական տրանսպորտային միջոցների չափազանց կուտակումներ տեղամասերում չկան:

	Աղմուկ	(ա) Շինարարական աղմուկը պետք է սահմանափակվի թույլտվության մեջ սահմանված ժամերով: (բ) Աշխատանքների ընթացքում գեներատորների շարժիչների ծածկերը, օդի կոմպրեսորները և հոսանքով աշխատող այլ մեխանիկական սարքավորումները պետք է լինեն ծածկված, և սարքավորումները պետք է տեղադրվեն բնակելի տարածքներից հնարավորինս հեռու:
	Ջրի որակ	ա) Կիրառվում են էրոզիայի և նստվածքների դեմ պայքարի համապատասխան միջոցներ, ինչպիսիք են, օրինակ՝ խոտի դեզեր և/կամ տիղմային ցանկապատեր՝ կանխելու նստվածքի տեղաշարժը տեղամասից դուրս և մոտակա առվակներում և գետերում ավելորդ պղտորություն կանխելու համար: բ) Անձրևաջրերը հեռացվում են շինհրապարակից՝ օգտագործելով անձրևաջրերի դրենաժային համակարգը:
	Թափոնների կառավարում	(ա) Քանդման և կառուցապատման աշխատանքներից ակնկալվող բոլոր թափոնների գլխավոր տեսակների համար պետք է նախանշվեն թափոնների հավաքման և հեռացման ուղիները: (բ) Կառուցապատման և քանդման արդյունքում առաջացած հանքային թափոնները պետք է առանձնացվեն ընդհանուր աղբից, օրգանական, հեղուկ և քիմիական թափոններից՝ տեղում թափոնների տեսակավորման և համապատասխան տարաներում պահպանման միջոցով: (գ) Շինարարական թափոնները պետք է հավաքվեն և հեռացվեն համապատասխան կարգով լիցենզիա ստացած աղբահանող ընկերությունների կողմից: (դ) Թափոնների հեռացման մասին արձանագրությունները պետք է պահվեն որպես ապացույց առ այն, որ կառավարումը պատշաճ իրականացվել է՝ ըստ նախատեսվածի: (ե) Իրագործելիության դեպքում, կապալառուն կրկնօգտագործում և վերամշակում է համապատասխան կենսունակ նյութերը (բացի ասբեստից):
	Հողային աշխատանքներ	ա) Հողային աշխատանքներից առաջացած ավելցուկային նյութը և հողի վերին շերտը կպահվեն առանձին և կօգտագործվեն հետլիցքի և տեղամասի վերականգնման համար: բ) 30 մ-ից ոչ ավելի հաստությամբ հողի վերին շերտը առանձին կհանվի և ժամանակավորապես կհավաքվի տեղում: գ) լցակույտի բարձրությունը չի գերազանցի 3,0 մ-ը, իսկ թեքության անկյունը չի գերազանցի 34º-ը: դ) Ժամանակավոր պաշարները պետք է սեղմվեն և ծածկվեն բրեզենտով, որպեսզի

		կանխվի անձրևաջրերի հետևանքով առաջացած էրոզիան: ե) հողի վերին շերտը կվերօգտագործվի հետլիցքի համար՝ հեշտացնելու հողամասի վերամշակումը: զ) Գրունտի ավելցուկային քանակությունը կտեղափոխվի համաձայնեցված վայր:
Ը. Երթևեկության և հետիոտնային ապահովություն	Շինարարական աշխատանքներով պայմանավորված ուղղակի և անուղղակի վտանգ հանրային երթևեկության և հետիոտների համար	Պետական նորմերի համաձայն կապալառուն ապահովում է կառուցապատման տեղամասի պատշաճ անվտանգությունը և շինարարության հետ կապված երթևեկության կարգավորումը: Սա ներառում է նաև՝ ▪ նշանների տեղադրում, նախազգուշացնող նշաններ, խոչընդոտներ և շրջանցում, տեղամասը պետք է հստակ տեսանելի լինի, իսկ հանրությունը պետք է տեղեկացված լինի պոտենցիալ վտանգների մասին, ▪ երթևեկության կառավարման համակարգ և աշխատակազմի վերապատրաստում, մասնավորապես տեղամասի մուտքի և տեղամասի մոտակայքում խիտ երթևեկության մասով: Անվտանգ անցումներ հետիոտների համար այն վայրերում, որտեղ շինարարական աշխատանքների հետ կապված երթևեկությունը խոչընդոտներ է ստեղծում, ▪ աշխատանքային ժամերի համապատասխանեցում տեղական երթևեկության մոդելին. օրինակ, ծանրաբեռնված ժամերին կամ խոշոր եղջերավոր անասունների շարժի ժամանակ խուսափել խոշոր տրանսպորտային աշխատանքներից, ▪ երթևեկության ակտիվ կառավարում տեղամասում՝ պատրաստված և տեսանելի աշխատողների կողմից, եթե դա անհրաժեշտ է հանրության հարմարավետ երթևեկության համար, ▪ դեպի այլ օբյեկտներ, խանութներ, բնակելի տներ անվտանգ և անխափան մուտքի ապահովում վերանորոգման աշխատանքների ընթացքում, եթե տվյալ շինությունները բաց են հանրության համար:
Թ. Սոցիալական ռիսկերի կառավարում	Հանրային կապերի կառավարում	Շինարարն ունի տեղական հետադարձ կապն ապահովող անձնավորություն ով նշանակված է ապահովելու տեղական բնակչության հետ հաղորդակցությունը և առաջարկություններ/բողոքներ ստանալը՝ (ա) Տեղական բնակչության հետ իրականացվել են խորհրդակցություններ նույնականացնելու և ակտիվ ձևով կառավարելու տեղական բնակչության և դրսից

		բերված աշխատուժի միջև ծագող հնարավոր կոնֆլիկտները: (բ)Կապալառուն բարձրացնում է տեղական բնակչության իրազեկվածությունը սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների ռիսկերի վերաբերյալ , որոնք կարող են կապված լինել դրսից բերված աշխատուժի հետ: (գ) Բնակչությունը համապատասխան դեպքերում իրազեկված է շինարարական աշխատանքների ժամանակացույցի վերաբերյալ, ծառայությունների կասեցման, երթեկության տարանցիկ ուղիների և ավտոբուսների ժամանակավոր կանգառների, պայթեցման և քանդման աշխատանքների վերաբերյալ: (դ) Շինարարական աշխատանքները չեն իրականացվում գիշերային ժամերին: Անհրաժեշտության դեպքում գիշերային աշխատանքների համար կկազմվեն պատշաճ ժամանակացույցեր և համայնքները պատշաճ կերպով կտեղեկացվեն այդ մասին, այնպես որ հնարավոր կլինի ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ: (ե)Ցանկացած ծառայության դադարեցումից նվազագույնը հինգ օր առաջ (ներառյալ ջուր, էլեկտրոէներգիա, հեռախոս, ավտոբուսային երթուղիներ), համայնքի անդամները իրազեկվում են նախօրոք ծրագրի վայրում, ավտոբուսային կագառներում և ազդակիր տներում հայտարարությունների միջոցով:
	Աշխատանքի կառավարում	ա) Հնարավորության սահմաններում հիմնել աշխատանքային ճամբարները համայնքներից հեռու: (բ) ձեռնարկել աշխատանքային ճամբարների նիստեր և շահագործում՝ խորհրդակցելով հարևան համայնքների հետ: (գ) Հնարավորության սահմաններում հավաքագրել ոչ հմուտ կամ կիսահմուտ աշխատողների տեղական համայնքներից: Որտեղ և երբ հնարավոր է, տրամադրել աշխատողների հմտությունների ուսուցում՝ տեղական բնակչության մասնակցությունը բարձրացնելու նպատակով: դ) Աշխատանքի վայրում ապահովել համապատասխան սանհանգույց (սանհանգույցներ և լվացվելու տարածքներ տարածքներ) տաք և սառը հոսող ջրի, օճառի և ձեռքի չորացման սարքերի համապատասխան պաշարներով: Ստեղծել

		ժամանակավոր մաքուր տարածք ցանկացած աշխատանքային ճամբարի համար՝ առանց մոտակայքում գտնվող ջրահոսքերի աղտոտման: ե) բարձրացնել աշխատողների իրազեկվածությունը տեղական բնակչության հետ ընդհանուր հարաբերությունների կառավարման վերաբերյալ, սահմանել վարքագծի կանոններ՝ միջազգային պրակտիկային համապատասխան և խստորեն կիրառել դրանք, ներառյալ աշխատողներին աշխատանքից հեռացնելը և համապատասխան մասշտաբի ֆինանսական տույժեր կիրառելը:
	Բողոքների Լուծման Մեխանիզմի (ԲԼՄ) կառավարում	(ա) ԲԼՄ-ն ստեղծվել և գովազդվում է տեղական մակարդակում: Կապալառուն տեղեկացվում է ստացված բանավոր և ոչ բանավոր բողոքները գրանցելու և ՀՏՁՀ-ին հայտնելու իր պատասխանատվության մասին: (բ) ԲԼՄ կոնտակտային տվյալները, ներառյալ տեղական կենտրոնական կետերը, տեղադրվել են շինհրապարակում և տեղական համայնքի վարչական գրասենյակում (գ) ԲԼՄ տեղական համակարգողը ստանում և գրանցում է բնակչության բողոքները ԲԼՄ մատյանում և պարբերաբար հաղորդում է բողոքները ՀՏՁՀ-ին:

ՄԱՍ Դ: ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՊԼԱՆ

Գործունեություն	Ինչ (պարամետր է վերահսկվելու)	Որտեղ (է պարամետրը վերահսկվելու)	Ինչպես (է պարամետրը վերահսկվելու)	Երբ (սահմանել հաճախականությունը/կամ շարունակականությունը)	Ինչու (է պարամետրը վերահսկվելու)	Ով (է պատասխանատու պարամետրի վերահսկման համար)
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ						
Շինարարական նյութե մատակարարում	Շինարարական նյութերի գնումը արտոնագրված մատակարարներից	Մատակարարների գրասենյակներ և պահեստներ փոխառության վայրերի	Փաստաթղթերի ստուգում Նյութերի որակի ստուգում	Նյութերի մատակարարման վերաբերյալ համաձայնագրերի ստորագրման ընթացքում	-Ապահովել շինարարության տեխնիկական որակը -Պաշտպանել մարդկանց առողջությունը և միջավայրը	ՀՏԶՀ Տեխնիկական վերահսկողության կազմակերպություն

Շինարարական նյութերի և թափոնների տեղափոխում Շին տեխնիկայի և մեքենաների տեղաշարժը	Շինարարական տեխնիկայի և մեքենաների տեխնիկական վիճակը Բեռնատար մեքենաների թափքի ծածկի ապահովումը՝ շինարարական թափոններ և այլ շինարարական նյութեր տեղափոխելիս, Շինարարական տրանսպորտային միջոցների և մեքենաների տեղափոխում սահմանված երթուղիներով և աշխատանքային ժամերին (9:00-18:00): Ջրցանման իրականացում՝փոշի	Շին հրապարակի մուտքեր և ելքեր	Նախապես համաձայնեցված տեղափոխության երթուղիների ակնադիտական զննում Վերակառուցվող ճանապարհի տեղամասի զննում	Չնախատեսված ամսական մոնիտորինգային ստուգայցեր	-Շրջակա միջավայրում արտանետումների կառավարում -Աղմուկի և թրթռումների կառավարումը գործող նորմերին համապատասխան -Հետիոտնային անցումների անվտանգության, երթևեկության և արտակարգ պատահարների	ՀՏՁՀ Տեխնիկական հսկողությունն իրականացնող ընկերություն Ճանապարհային ոստիկանություն

	առաջացնող շինարարական աշխատանքների ընթացքում				կառավարում	
Շինարարական սարքավորումների պահպանություն	- մեքենաների և շինտեխնիկայի լվացում շինհրապարակից դուրս կամ բնական հոսքերից առավելագույն հեռավորության վրա - շինհրապարակից դուրս կամ նախապես որոշված սահմանափակված տարածքում շինարարական սարքավորումների լիցքավորում կամ յուղում	Շինարարական հրապարակ	Իրականացման հսկողություն	Պատահական այցելություններ աշխատանքային ժամերին	- խուսափել սարքավորումների շահագործման պատճառով ջրի և հողի աղտոտումից նավթամթերքներից. - հրդեհի դեպքում ժամանակին տեղայնացնել և նվազեցնել սպասվող վնասը	ՀՏՁՀ Տեխնիկական վերահսկողության կազմակերպություն
Շինարարական թափոնների կուտակում	- Շինարարական աղբի ժամանակավոր պեհաստավորում	Շինարարության վայր Աղբի	Ստուգաթերթեր Դիտազնն	Ընթացքում և աշխատանքային ժամերի	Խուսափել շրջակա միջավայրի	ՀՏՁՀ Տեխնիկական վերահսկողութ

	հատուկ հատկացված տարածքներում - Ներտ և վտանգավոր թափոնների ժամանակավոր պահեստավորում նշանակված վայրերում -Աղբի՝ ժամանակին տեղափոխում Ֆորմալ ձևավորված աղբավայրեր	տեղափոխության համար նախատեսված աղբավայրեր	ում		աղտոտումից	յան կազմակերպություն
Աշխատողների առողջություն և անվտանգություն	- Շինարարական սարքավորումների շահագործման և պաշտպանիչ համազգեստի օգտագործման կանոնների խիստ պահպանում - աշխատանքի անվտանգության ուսուցման և հրահանգների գրառումների առկայություն - Աշխատանքային տարածքի	Շինարարական հրապարակ	Գործունեության ստուգում	Շինարարության ամբողջ ժամանակահատվածում	Նվազեցնել պատահարների հավանականությունները	ՀՏԶՀ Տեխնիկական վերահսկողության կազմակերպություն

	ցանկապատում, նշանների տեղադրում - Աշխատանքի վայրում առաջին օգնության բժշկական փաթեթների և կրակմարիչների առկայություն					
Գործունեություն մասնավոր սեփականության և այլ գույքի կողքին	Խուսափել մասնավոր գույքի սահմանների խախտումներից կամ պատահականորեն վնասելու դեպքերից (պատերի և ցանկապատերի հարևանությամբ կիրառել փոքր չափերի մեքենաներ կամ ձեռքով աշխատանք, շինարարական նյութերի պահեստավորումը և թափոնների հավաքումը կազմակերպել մասնավոր սեփականությունից հեռու և այլն):	Մասնավոր սեփականության հարևանությամբ իրականացվող աշխատանքներ	Զննում և փորձաքննություն	Շինարարության ամբողջ ընթացքում	-Նվազեցնել մասնավոր սեփականությանը վնասի հասցման հավանականությունը: -Բացառել մասնավոր սեփականության վրա սեփականատիրոջ կամ օգտագործողի իրավունքների ժամանակավ	ՀՏԶՀ Տեխնիկական վերահսկողության կազմակերպություն

	Մասնավոր սեփականությանը ոչ դիտավորյալ վնասի հասցման դեպքում արագ վերականգնել նախնական վիճակը կամ ավելի լավ կարգավիճակը: Մասնավոր սեփականության վրա ակնկալվող ժամանակավոր ազդեցության դեպքում սեփականատերերին նախապես տեղեկացնել և երաշխավորել գույքի վերականգնումը, ձեռքբերել սեփականատերերի գրավոր համաձայնությունը միջամտության համար և անհապաղ վերականգնել վնասը: Եթե աշխատանքների				որ կամ մշտական խախտումը:	

	ընթացքում մասնավոր հողի օգտագործման կարիք է առաջանում, չներխուժել ազդակիր տարածք մինչև տարաբնակեցման ծրագրի ամբողջական մշակումն ու իրականացումը:					
Ծառերի պահպանում	- Ենթածրագրի տարածքում առկա ծառերի գույքագրում; - Գոյություն ունեցող ճանապարհի սահմանի մոտ գտնվող ծառերը պետք է գծանշվեն և շրջափակվեն ցանկապատով, դրանց արմատային համակարգը պաշտպանված լինի և ծառերի ցանկացած վնասից զերծ մնա.	Շինհրապարակ	Տեսողական զննում	Շինարարության ամբողջ ընթացքում	Զերծ մնալ առկա բուսականությունը վնասելուց	ՀՏԶՀ Տեխնիկական վերահսկողության կազմակերպություն

	- Նախքան ծառերի, թփերի և կոճղերի հեռացումը, թույլտվությունը կտրվի Գառնիի համայնքապետարանից եթե ծառերի վրա ազդեցություն լինի:					
Համայնքի առողջություն և անվտանգություն	Ապահովել, որ ծրագրի գործողությունները չունենան որևէ բացասական ազդեցություն համայնքի առողջության և անվտանգության վրա, ներառյալ ծրագրի հետ կապված երթևեկության և ճանապարհային անվտանգության ռիսկերը:	Շինհրապարակը և շրջակայքը	Զննում և փորձաքննություն	Շինարարության ամբողջ ընթացքում	Բացառել միջադեպերը և պատահարները	ՀՏԶՀ Տեխնիկական վերահսկողության կազմակերպություն
Շինհրապարակների վերամշակումը և կանաչապատումը	Անհրաժեշտության դեպքում, շինհրապարակի և մշտական մուտքի	Շինհրապարակ և մուտքի ճանապարհներ	Զննում և փորձաքննություն	Շինարարության վերջնական	Նվազագույնի հասցնել լանդշաֆտի գեղագիտակ	ՀՏԶՀ Տեխնիկական վերահսկողության

	ճանապարհների և տարածքի կանաչապատում և ավարտական մաքրում			փուլում	ան արժեքի կորուստը շինարարակ ան գործունեությ ան արդյունքում	կազմակերպու թյուն
Կոշտ թափոնների կառավարում	-Աղբամանների տեղադրում և կազմակերպում թափոնների պարբերաբար տեղափոխման համար	Շինհրապարակ	Ջննում	Շինարարութ յան ամբողջ ընթացքում	-Կանխել հողի, մակերևութա յին և ստորերկրյա ջրերի աղտոտումը -Պահպանել տեղանքի տարածքի և դրա շրջակայքի էսթետիկ տեսքը	ՀՏՋՀ Տեխնիկական վերահսկողութ յան կազմակերպու թյուն Գառնիի համայնքապե տարան
Փոշու կուտակում	- Շինարարական տարածքներում ջրի ցողման միջոցառումների ապահովում և շինարարական աղբի ժամանակին հեռացում.	Շինարարական հրապարակ և մոտեցնող ճանապարհներ	Դիտազնն ում	Շինարարութ յան ողջ ընթացքում	- Կանխարգելել տեղանքից դուրս փոշու տարածումը և աղտոտումը.	ՀՏՋՀ Տեխնիկական վերահսկողութ յան կազմակերպու

	- Սորուն նյութերի պահեստավորում՝ պաստառների օգտագործմամբ տեղում				- Նվազեցնել փոշու ազդեցության հետ կապված աշխատողների և հարակից համայնքների առողջական ռիսկերը:	թյուն
Պատահական գտածոներ	- Աշխատանքների դադարեցում՝ անմիջապես փոփոխության գտածոների բացահայտումից հետո. - Պաշտոնական հաղորդակցություն ՀՀ ԿԳՄՍ նախարարության հետ՝ պատահական գտածոների վերաբերյալ - Անհրաժեշտ պեղումների և տեղանքների պահպանման ուղղությամբ	Շինհրապարակ	- Պատահական գտածոների զննում. - Ներկայացված փաստաթղթերի ստուգում	Շինարարության ամբողջ ընթացքում	Համոզվել, որ մշակութային հուշարձանը չի վնասվել շինարարական աշխատանքների ընթացքում	ՀՏԶՀ Տեխնիկական վերահսկողության կազմակերպություն ՀՀ Կրթության, գիտության մշակույթի և սպորտի նախարարություն

	ձեռնարկված ժամանակին պայմանավորվածություններ					
Հողային աշխատանքներ	-Հողի վերին շերտի վերամշակման համար հողի հեռացում և ժամանակավոր պահեստավորում - Պեղված հողի ժամանակակից պահպանումը որոշված վայրերում. - Անհրաժեշտության դեպքում պեղված հողի պահպանում և ավելցուկային զանգվածը գրավոր հաստատված վայրեր տեղափոխություն	Շինհրապարակ	Գործողությունների զննում	Հողային աշխատաքների ընթացքում	- Բուսականության կորստի սահմանափակում հողային աշխատանքների արդյունքում և մասնիկներով վերգետնյա ջրաամբարների աղտոտումը նվազագյունի հասցնել -Նվազեցնել ստորգետնյա և վերգետնյա ջրերի աղտոտումը հողով:	ՀՏՁՀ Տեխնիկական վերահսկողության կազմակերպություն
Բողոքների լուծման	Ենթածրագրի	Շին	Փորձաքնն	Շինարարութ	Ծրագրի	ՀՏՁՀ

մեխանիզմի գործածում	վերաբերյալ բողոքների կամ հարցերի վերաբերյալ հանրային իրավունք: Դիմում տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարին (համայնքային իշխանություններին): Բողոքների համակարգողի նշանակում (բողոքների ստացում, վերանայում և բացատրություն, բողոքների գրանցքում մատյանում և փորձել լուծել տեղում): Բողոքատուն կարող է դիմել անմիջապես ՀՏՋՀ՝ թեժ գիծ ծառայության (010 24 01 59), փոստային նամակի (Երևան 0037, Կ. Ուլնեցի 31), էլեկտրոնային նամակի	հրապարակ	ություն	յան ամբողջ ընթացքում	դրույթների հետ համապատասխանության մոնիտորինգ; Ժամանակին լուծել առկա հարցերն ու բողոքները	տեխնիկական վերահսկողական ընկերություն

	(support@atdf.am).կամ ՀՏԶՀ-ի կայքում տեղադրված գործիքի միջոցով (http://atdf.am/hy/Home/ContactUs):					
ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓՈՒԼ						
Վայրի պահպանումն ու շահագործումը	Չթույլատրված շինարարություն և հողօգտագործում	Ճանապարհային տարածքում	Տեսանելի հսկողություն	Շահագործման ողջ ընթացքը	Կանխել կենտրոնական հատվածի տարածքի գեղագիտական և վերականգնողական արժեքի կորուստը	Գառնիի համայնքապետարան
Կոշտ թափոնների կառավարում	Տեղադրված են աղբամաններ, պարբերաբար իրականացվում է թափոնների տեղափոխում	Ճանապարհային տարածքում	Դիտազննում	Գործառնության ամբողջ ընթացքում	-Կանխել հողի, մակերևութային և ստորերկրյա ջրերի աղտոտումը -Պահպանել տեղանքի	Գառնիի համայնքապետարան

					տարածքի և դրա շրջակայքի էսթետիկ տեսքը	

Հավելված 1: Տեղանքի քարտեզ /լուսանկար

Քարտեզ 1 Վերականգնված ճանապարհները նշված են կապույտով, վերականգնման ենթակա ճանապարհները նշված են կարմիրով

Քարտեզ 2 Ենթածրագրի տարածք

Նկար 1 Բաղրամյան փողոց

Նկար 2 Զոհրապի փողոց, հյուրանոցի դիմացի հատված

Նկար 3 Կոմիտասի փողոց

Նկար 4 Հյուրանոց

Նկար 5 Զոհրապի փողոց

Հավելված 2: Շինարարական թափոնների հեռացման թույլտվության պատճեն



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԳԱՌՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի
մարզի Գառնի համայնք,
Հայաստան, ԿՈՏԱՅՔ, ԳԱՌՆԻ, ՍՏ. ՇԱՀՈՒՄՅԱՆ,
4 շ., Հեռ. -, garnihamaynq@mail.ru

N 269
31 հունվար 2024 թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Տեղեկացնում ենք, որ Գառնի համայնքի ընդհանուր աղբավայրը գտնվում է « Ջի Բի Էյջ» ընկերությանը պատկանող տարածքից 2,5 կմ հեռավորության վրա: Գառնիի համայնքապետարանը չի առարկում, որ «Ջի Բի Էյջ ՍՊԸ-ի հյուրանոցա-ռեստորանային համալիրը սպասարկող արտաքին ինժեներական ենթակառուցվածքների կառուցում» ենթածրագրի շրջանակներում առաջացած շինարարական աղբը և թափոնները տվյալ տարածքից պարբերաբար տեղափոխվեն ընդհանուր աղբավայր՝ համայնքի հետ համապատասխան պայմանագիր կնքելուց հետո:

Համայնքի ղեկավար՝ Տիգրան Պողոսյան



Հավելված 3: Բնապահպանական և սոցիալական կառավարման պլանի վերաբերյալ հանրային քննարկման արձանագրություն

Սույն թվականի ապրիլի 30-ին Գառնիի համայնքապետարանում կայացել է հանրային լսում՝ ՀՏՉՀ ինժեների, սոցիալական մասնագետի, Գառնի համայնքի ղեկավարի, համայնքապետարանի աշխատակազմի և Գառնիի բնակիչների մասնակցությամբ: Ընդհանուր առմամբ հանդիպմանը մասնակցել է 11 մարդ, որից 3-ը կին:

Հանրային լսման հայտարարությունը Գառնի համայնքի վեբ կայքում տեղադրվել է 26.04.2024թ.

Բացման խոսքն ասեց Գառնի համայնքի ղեկավար Տիգրան Պողոսյանը, ինչպես նաև ներկայացրեց հանդիպման նպատակը և ենթածրագրի հայեցակարգը:

ՀՏԶՀ-ի սոցիալական մասնագետ Մարինե Վարդանյանը մասնակիցներին տեղեկացրեց, որ ՀՏԶՀ-ի կողմից պատրաստվել է Բնապահպանական և սոցիալական կառավարման պլան (ԲՍԿՊ)՝ «GBH» ՍՊԸ-ի հյուրանոցային ռեստորանային համալիրին սպասարկող արտաքին ինժեներական ենթակառուցվածքների կառուցում ենթածրագրի համար: Հանրային լսման ընթացքում համայնքին ներկայացվեց ԲՍԿՊ-ի նախագիծը, տեղեկացվեց իրականացվող աշխատանքների գործունեության մասին: Նշվեց, որ ԲՍԿՊ-ն ներառում է շրջակա միջավայրի, սոցիալական, առողջության և անվտանգության բոլոր հնարավոր ազդեցությունները և դրանց մեղմացման միջոցառումները, որոնք պետք է իրականացվեն շինարարական աշխատանքների ընթացքում:

Մարինե Վարդանյանը ներկայացրեց ակնկալվող ժամանակավոր բնապահպանական և սոցիալական ազդեցությունները, այդ թվում՝ աղմուկի և փոշու առաջացումը, նշվեց, որ շինարարական աշխատանքների ընթացքում առաջացած աղբը տեղափոխվելու է համայնքի կողմից հատկացված աղբավայր: Ներկայացվել են նաև նախատեսվելիք անվտանգության միջոցառումները՝ ներառյալ շինհրապարակի ցանկապատումը, շինհրապարակի վտանգավոր հատվածներում զգուշացնող ժապավենների տեղադրումը և երթևեկության կառավարումը, ինչպես նաև անվտանգության նշանների տեղադրման պահանջները: Ներկայացվել են աշխատանքի անվտանգության միջոցառումները, այդ թվում՝ համազգեստ կրելը , անհատական պաշտպանության միջոցները, ինչպես նաև շինանյութերի մատակարարման և շինտեխնիկայի պահպանման պահանջները: Նա նշեց, որ նախագծով բացասական սոցիալական ազդեցություններ չեն նախատեսվում, այդ թվում՝ հարկադիր վերաբնակեցում կամ հողի ժամանակավոր օգտագործում շինարարության ընթացքում: Աշխատանքները կիրականացվեն համայնքային հողատարածքներում, որոնց համար համայնքը համաձայնություն է տվել: Նա ներկայացրեց նաև շինարարական աշխատանքներին վերաբերող բնապահպանական նորմերն ու կանոնակարգերը: Նշվեց նաև, որ նախատեսվող աշխատանքները որևէ ազդեցություն չեն ունենա պահպանվող տարածքների կամ մշակութային հուշարձանների վրա: Ներկայացվեց, թե ինչպես է իրականացվելու շինարարական աշխատանքների համապատասխանության մոնիտորինգը՝ ներկայացված ԲՍԿՊ-ի պահանջներին:

Հանդիպման մասնակիցներին ներկայացվեց ՏՏԵԶ ծրագրի Բողոքների լուծման մեխանիզմը (ԲԳՄ): ՀՏԶՀ սոցիալական մասնագետը ներկայացրեց համայնքապետարանում GRM տեղական համակարգող ունենալու անհրաժեշտությունը, որը պատասխանատու կլինի բողոքների գրանցման և ՀՏԶՀ-ին ներկայացնելու համար:

Որպես GRM տեղական համակարգող առաջարկվել և ընտրվել է Հասմիկ Գրիգորյանը: Ներկայացվել է բողոքների ներկայացման, տրամադրված GRM մատյանում գրանցման, բողոքների քննության և վերանայման ընթացակարգերը: Նշվեց, որ GRM-ի մասին տեղեկատվությունը պետք է փակցվի Գառնիի վարչական գրասենյակի տեղեկատվական տախտակին և շինհրապարակի մուտքի մոտ տեղադրվելիք ենթածրագրի տեղեկատվական տախտակին:

ՀՏԶՀ ինժեներ Սերգեյ Թումանյանը ներկայացրեց ենթածրագրի մանրամասները.

Հանրային լսման հանդիպման մասնակիցները բարձրաձայնեցին հարևան բնակիչների մտահոգությունը ենթածրագրում չընդգրկված ավտոկայանատեղի կառուցելու վերաբերյալ: Բնակիչները պնդում են, որ իրենց տների առջև կկանգնեն զբոսաշրջային ավտոբուսներ և մեքենաներ՝ խոչընդոտելով նեղ փողոցների երթևեկությանը, եթե հյուրանոցի համար նախատեսված չկա կայանատեղի: ՀՏԶՀ ինժեները մասնակիցներին հաղորդեց, որ ենթածրագիրը PPI (Պետ-մասնավոր ներդրումներ) ծրագիր է, և մասնավոր ներդրումների մասնաբաժինը կազմում է 4:1 պետական բաժնի նկատմամբ: Այսպիսով, ՀՏԶՀ նախագիծը ներառում է ճանապարհների վերականգնում, կոյուղու համակարգի վերականգնում և էներգահամակարգի տեղադրում, և այն չի կարող փոփոխվել՝ ներառելով ավտոկայանատեղի, քանի որ այն կփոխի այդ հարաբերակցությունը:

Հարց 1 – ԲՍԿՊ-ն ներառվելո՞ւ է շինարարական աշխատանքների պայմանագրում:

Պատասխան 1 – Իհարկե, ԲՍԿՊ-ն կցվելու է շինարարության կապալառուի պայմանագրին, ինչպես նաև տեխնիկական վերահսկողության պայմանագրին՝ որպես պայմանագրերի մաս: Նրանք երկուսն էլ իրենց անձնակազմում ունենալու են բնապահպանության մասնագետ, որը կհետևի ԲՍԿՊ-ի պահանջներին: Բացի այդ, ՀՏԶՀ բնապահպանական և սոցիալական մասնագետները իրականացնելու են ամսական մոնիտորինգային այցեր շինհրապարակ՝ վերահսկելու իրականացվող աշխատանքների համապատասխանությունը ԲՍԿՊ-ին:

Հարց 2 – Ե՞րբ է սկսվելու շինարարությունը: Ուզում ենք իմանալ, քանի որ ենթածրագրում ընդգրկված ճանապարհի մի մասը ներառված է նաև համայնքի մեր սուբվենցիոն նախագծում, եթե ՀՏԶՀ-ն պատրաստվում է բարեկարգել այս փողոցը (Բաղրամյան փող.), մենք մեր միջոցներն ուղղելու ենք այլ խնդիրների լուծմանը:

Պատասխան 2 – Դեռ պարզ չէ, ՀՏԶՀ-ն չի սկսել գնումների գործընթացը: Մանրամասներին ծանոթանալու համար կարող եք կապվել LEIDP համակարգողի հետ:

Մասնակիցների ցանկը բերված է ստորև

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր

«ՋԻԲԻԷՅՋ» ՍՊԸ-ի հյուրանոցա-ռեստորանային համալիրը սպասարկող արտաքին ինժեներական ենթակառուցվածքների կառուցում

22 Կոտայքի մարզ, Գառնի համայնք — 30 ապրիլ, 2024թ., ժամը 12:00

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑԱՆԿ

N	Ազգանուն, անուն	Կազմակերպություն/ Զբաղվածություն	Հեռախոս	Ստորագր.
1	Մուրադի Գրիգորի	ՀՏԳՀ ակց. հարց. մասնագետ	034588830	
2	Միքայելի Դավուշյան	Գառնի համայնքի ղեկավար	099 89 84 89	
3	Գրիգորյան Համլետ	Գառնիի համայնքապետարանի/գլխավոր մասնագետ	077601057	
4	Գրիգորյան Արշակուհի	բնակիչ	091 62392	
5	Հարությունյան Հրանտ	բնակիչ	043 056004	
6.	Հարությունյան Գրիգոր	բնակիչ	055575552	
7	Գեղամ Թադևոսյան	բնակիչ	043 600 8 90	
8	Գրիգորյան Հարությունի	բնակիչ	096694447	
9	Բաբայան Բորիս	բնակիչ	091749870	

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

N	Ազգանուն, անուն	Կազմակերպություն	Հեռախոս	Ստորագր.
10	Սարգսյան Լևոն	բնակիչ	098800140	
11	Գրիգորյան Հրանտ	Գառնի համայնքի տեղի կրկնակալ	053758484	

Հավելված 4: Շինարարական թույլտվություն

Ձև N 2-3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ, ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔ

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

N 60 07 հունիս 2024թ

Տրված է կառուցապատող — *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ, Երևան, Կ.Ուլնեցու 31/2, 4-6 հարկ*
(Իրավաբանական անձի անվանումը, պետական գրանցման վկայագրի համարը)

Կոթայքի մարզ Գառնի համայնք գ.Գառնի Գ.Զոհրապի 25, 07-021-0078-0036 հասցեում
(Տեղակայման անձի անունը, ազգանունը, հասցեն, հեռախոսի գտնվելու վայրը)

«ՋԻԲԻԷՅՋ ՍՊԸ-ի հյուրանոցա-ռեստորանային համալիրը սպասարկող արտաքին ինժիներական ենթակառուցվածքների կառուցում», միջինից բարձր ռիսկայնության ատյան՝ III կատեգորիա ատֆայլ 926մ, սալարկում 616քմ,կեղտաջրերի հեռացում 481մ,էլեկտրամատակարարում 0,4կվ օբյեկտի
(Օբյեկտի անվանումը, տեխնիկական բնութագրերը, հանձնման ժամանակը, հիմնական ցուցանիշները)

նոր կառուցվող շինարարական աշխատանքների կատարման, այդ թվում՝
(նոր կառուցման, վերակառուցման, վերանորոգման, ուժեղացման և այլն)

կառուցապատվող հողամասի գլխավոր հատակագծի վրա նշված ոչ հիմնական կառույցների _____ տեղադրման համար:
(նշվում են ոչ հիմնական կառույցների անվանումները)

1.Օբյեկտի նախագծային փաստաթղթերը՝
1)մշակվել են՝ *Մեկ փուլով աշխատանքային նախագիծ ՀԱԼԴԻ ՔՈՆՍԱԼԹ ՍՊԸ*
(նախագծային փաստաթղթերի փուլը, նախագծային աշխատանքների կատարողի անվանումը)

ՔՊԼ 16919 կողմից,
(լիցենզիայի համարը)

2)հաստատել է (են) *21/08/2023* թ. N *71/ՊՓ-221* փորձագիտական դրական եզրակացությունը (եզրակացությունները) *Պարզ Փորձաքննություն*
(նշել, փորձաքննության տեսակը)

ՀՀ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՐՏԱԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ ՔՊԼ 17074 կողմից
(նշել, փորձաքննության մասնագիտացված անվանումը, լիցենզիայի համարը)

կամ նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի երաշխավորագիրը՝
(նշել նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի երաշխավորության պայմանագրի համարը)

3)սահմանված կարգով համաձայնեցվել են իրավասու *ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ* հետ:

մարմնի, օրենքով սահմանված այլ շահագրգիռ մարմինների _____

(նշել մարմինների անվանումները և հանձնաժողովների ժամկետները)

2.Շինարարական աշխատանքներն իրականացնել **07 հունիս 2024 - 08 հունիս 2026** ընթացքում:

(նշել շինարարության նորմատիվային տևողությունը)

ներառյալ ավարտական ակտի տրամադրման համար ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը:

2.1.Սպասվել օբյեկտի շահագործման թույլտվության ստացումը՝

☐ ավարտական ակտի տրամադրումից անվա ընթացքում.

☐ ավարտական ակտի տրամադրման օրը:

Ներառյալ ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը:

3.Շինարարության վարման մասնակը շարունակած է չլինի, կարված և դրոշմակնքված է **Գառնի համայնքի գլխավոր** կողմից:

4.Նախագծին փաստաթղթերը փոփոխվել են

(լրացվում է N 1 հավելվածի 108-րդ կետով նախատեսված դեպքերում)

_____ կողմից

(նախագծային աշխատանքների կապալառուի անվանումը, ֆիզիկական հասցեն)

և սահմանված կարգով համաձայնեցվել իրավասու մարմնի _____ և այլ

(նշել իրավասու մարմնի անվանումը)

շահագրգիռ մարմինների _____ հետ:

(նշել օրենքով սահմանված համաձայնեցնող մարմինների անվանումները)

5.Հատուկ պայմաններ՝

1)Կառուցապատողը նախքան շինարարությունն սկսելը, ինչպես նաև դրա ընթացքում, պարտավոր է հասցվածք վնասների փոխհատուցման համար համապատասխան հետևանքով վնասներ կրող տարածքների հետ.

2)Շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետներում կառուցապատումը չավարտելու դեպքում գործում են N 1 հավելվածի 123-126-րդ կետերով սահմանված պահանջները.

3)Լրացվում է N 1 հավելվածի 84-րդ կետով սահմանված դեպքերում) սույն թույլտվությունը տրվել է սահմանված կարգով հաստատված «Նախագիծ» փուլի հիման վրա, որին հաջորդող «Աշխատանքային փաստաթղթեր» փուլը պետք է ապահովի հաստատված թույլ ընդունված լուծումները և աշխատանքների իրականացման հաջորդականությունը

_____

(նշվում են նախապատրաստական, հողային, շինմոնտաժային աշխատանքները և այլ աշխատանքներ)

6.Լրացվում է N1 հավելվածի 13-րդ կետով սահմանված դեպքերում)

Հաշվի առնելով, որ կառուցվող օբյեկտի շինարարությունը հնարավոր չէ առանց գլխավոր հատակագծի վրա համաձայնի տան նշված շենքի (շենքերի) և կամ շինության

(շինությունների) _____ քանդման՝

(նշվում են ամբողջությամբ կամ մասամբ քանդման ենթակա օբյեկտները, դրանց հիմնական ցուցանիշները, ընդհանուր մակերեսը, հարկայնությունը, շինանյութերը և այլն)

սեփականատիրոջը (օգտագործողին) _____

(նշվում է պետական գրանցման վկայական համարը)

տրված սույն թույլտվությունը նաև քանդման թույլտվություն է:

Օբյեկտի քանդման աշխատանքներն իրականացնել նախագծային փաստաթղթերով ամրագրված հաջորդականությամբ:

7.Այլ պայմաններ _____

(նշվում են իրավական ակտերով և (կամ) պայմանագրով նախատեսված այլ պայմանները)

8.Կառուցապատողը շինարարական (քանդման, ապամոնտաժման) աշխատանքները սկսելուց առնվազն 3 օր առաջ համանուն N 5 հավելվածի N 2-ն ձևի տեղեկացնում է իրավասու մարմնին:

9.Թույլտվության հիման վրա քանդված շինարարական և զուգահեռ աշխատանք կարող է իրականացվել բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, նախագծային փաստաթղթերին և նորմատիվ-տեխնիկական պահանջներին համապատասխան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Տիգրան Պողոսյան

Հավելված 5: Գառնի համայնքապետարանի կողմից տեղեկանք՝ հողերի սեփականության վերաբերյալ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԳԱՌՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի
մարզի Գառնի համայնք,
Հայաստան, ԿՈՏԱՅՔ, ԳԱՌՆԻ, ՍՏ. ՇԱՀՈՒՄՅԱՆ,
4 շ., Հեռ. -, garnihamaynq@mail.ru

N **515**
22 փետրվար 2024 թ.

Տեղեկանք

Տրվում է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին՝ առ այն, որ ««ՋԻԲԻԷՋ» ՍՊԸ-ի հյուրանոցա-ռեստորանային համալիրը սպասարկող արտաքին ինժեներական ենթակառուցվածքների կառուցում» ենթածրագրի շրջանակերում նախագծով նախատեսված շինարարական աշխատանքների՝ Հյուրանոցա-ռեստորանային համալիր մոտեցնող ճանապարհների և համալիրին հարակից տարածքի վերակառուցման, ջրամատակարարման և կեղտաջրերի հեռացման համակարգերի կառուցման և էլեկտրամատակարարման համակարգի կառուցման, իրականացման համար օգտագործվելու են համայնքային պատկանելության հողատարածքներ:

Համայնքի ղեկավար՝ **Տիգրան Պողոսյան**